

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԼԻՇԿԻՆ

ԴԱՅԻՐԻ ԱՆԿՈՒՄԸ

(ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱՆՈՒՆ ՎԻՊԱԿԻՑ)



891. 71
Մ-14

ԽՈՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ՄՈՍԿՎԱ, 1931

891.71
Մ-14

Կ. Տ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԼԻՇԿԻՆ

30 SEP 2006

25 NOV 2010

ԴԱՅԻՐԻ ԱՆԿՈՒՄԸ

(ՀԱՏՎԱԾ ՎԵՊԻՑ)

Թարգմ. Ա. Տ.-Ղ.



121 JUN 2013
2005 982 62
2005 VON 02

11.963

Սա հատվածն է մի մեծ պոեմի: Պոեմը քաղաքացիական կովկասին և և հեղինակը հանդերդում ե այդ կովկի ջերմ որերն ու ֆրոնտը, տեղալուշկաներն ու սափոսը, Վեպիկը գրված և 1921 թ. քաղաքացիական կովկի թարմ հիշողությունների, տպագորությունների ու աղդեցության ներքո՝ հեղափոխական պատերազմի դժկաբագույն ու խոչըրագույն մարտերի մասին: Պերեկոպի նվաճման Կարագը գրությունը տրված է հատու, առնական առներով և մեծ լարվածությամբ, ուժեղ ե զեղանկարված դաշտն ու ծովը, Կարմիր բանակը, շտաբի նսխագաւառատությունները, աշխատանքը անքուն գիշերները, բանակի հրամանատար N-ի հոչակավոր հարվածը: Մեծ թափով ե նկարագրված գալիք հարվածի ցասման ու թափի կուտակումը: Այս բոլորը պատմված ե բորբ մի լեզվով, վորի պափոսը արդարացված ե պատմությամբ: Յեզ հեղինակը պատմում է վոչ իբրև կողմանկի գիտող, այլ իբրև անմիջական մասնակից, հեղափոխության մարտիկ:

Ամբողջ գործը անսյուժետ և անհերոս մի յերկ ե, սակայն ծայր աստիճանի կատարյալ և զեղարվեստական, մեր որերի ինչական քնարա-եպիկական, հերոսական մի պոեմ:

1018
Ա5

Главлит № А-77.183

Заказ № 3076

Тираж 5.000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

ԱԱ. ՅԵ ԽԵԲ ՎԵՐԶԻՆ ՑԵՎ ՎՃՌԱԿԱՆ ԿՈՒՎԸ

Նվագում եյին յերաժշտախմբերը: Տարածությունները բացվում եյին հզոր ու մտածկուն, տիբությամբ եյին սահում գանդաղաւարժ ու յերգասաց հողմերը, տատանվում եյին դրաշները քարացած բատալյոնների: Խաչկապ գցած գոտիներով ջոկատապետները շրջում եյին զորքերի առաջ: Բանակի հրամանատարի մոտ, շրջանի կենտրոնում, հավաքվել եյին դիվիզիաների և շտաբերի պետերը: Պենզենսակյո դիվիզիայի պետը, թարթելով մրած թարթեչները, կոանալով ասում եր քիչ հուզված ձայնով:

— Դուք մի նայեցեք իմ դիվիզաններին, ընկեր հրամանատար, զինվորներ չեն, այլ բոկոտների մի ջոկատ: Վորտե՞ղ ե արգարությունը, հը՞:

Տարքերից թուչում եր հեղձ հրամանը՝

— Շարքիր!

Յեվ հանկարծ, քարացած շարժումների պառզայից հետո—թմբուկների և փողերի աղմկալի գոչումով խփեցին յերաժշտախմբերը: Ջոկատ-առ-ջոկատ անցնում եյին բատալյոնները: Հազարավոր վոտքեր թակում եյին ավազը համաշափ ու շեշտակի: Յեվ զաշտում — արձագանքում եյին պղնձե ու յերգասաց հնչյունները — կոկորդային ու թախծոտ ձայնով: յերգում եյին մըրթիների և զեղեցիկ դարերի մասին:

Դաշտերում ժամանակների սահմանագլխին ծառացել եր գեղին որը, իսկ նրա մեջ ամբոխների հանդիսավոր յերթածեսը, վոր փողեր եր յերբեմնի փարթամ դաշտային պետության վլատակների վրա: Բանակի հրամանատարն ու շտաբները ձիգ կանգնած, գալիքի թրթիռով թափանցված, և հողմերը, և չվերջացած ու գեռ անայլայլ որերի անհայտությունը:

Յեկ այդ կոկորդային հանդիսավոր ֆանֆարների յերգի միջից բանակի հրամանատարը տեսնում եր՝ շարժվում եյին վերահաս շարքերը, աչքերը շլած հրամանատարի կրծքին։ Յեկ ամենից առաջ յերկուսը — նրանց նա հանդիպել եր մեջ փոր տեղում, և նրանք մնացել եյին նրա հիշողության մեջ, ինչպես այս չեկ որը, ինչպես սառած դատարկ դաշտերը, Շարքավերջին մոտիկ կանգնածը՝ մի հաղթանգամ, կարմիր, քամուց կոպտացած յերեսով յերիխասարդ, վոր հագին ուներ սև կարկատած մի պիճակ, կոշիկներ, և վիզը փաթաթել եր կարմիր ծակոտած մի շարփով, նրա կողքին ավտրիական մի կոկ շինել հագած, զլիսին կեպի, պեխավոր և տարիքով, խոշոր ու հստակ աչքերով մի մարդ։

Յերգում եյին փողերը, հազարավոր վոտքեր թակում եյին ավազը և դեղնությամբ եյին արտացոլում անձայր դաշտերը. և այդ յերկուսը գնում եյին (իսկ նրանց յետեկց հազար—հազար անդեմ ու դատապարտվածներ): Ֆանֆարների յերգերում նրանք ընթանում եյին զմայլված գեղեցիկ դաշերի հեքյաթով—ծակոտած շարփով փաթաթած յերիխասարդը — զլուխը յետ դցած և արծվահայաց առաջ նայելով,—իսկ մյուսը, խոնարհած թարթիչներով (խոշոր ու ներւ ընկած), սուզված հեռու առկայծող յերազներում։

Անցնում եյին Պենզենսկայա դիվլիպայի ուսհվիրաները, Բանակի հրամանատարին ծանոթ եյին այդ վիրապատ, արնակալած մնացորդները։

— Ծնորհակալություն, ընկերներ!

— Հեղափոխությանն ենք ծառայում!

Զենիտում շշում եյին յերկաթե թոշունները, Հեռու սահմաններում ամպերի մեջ և թոշունների թեւերի վրա դողում եր վոսկյա թրթիռով վերջալույսը։ Շարքերը, հողմերի պես, անվերջ, անդեմ ընկնում եյին անհայտության, մոռացության ալիքների մեջ Յեկ հանկարծ գեղեցկացավ յերեկոն, թե հրաշալի դարձավ ֆանֆարների յեւեղը՝ կարծես եւ չկային նրանք, վորոնք վաղը պետք ե մեռնեյին, կարծես անցան դարեր, աղմկելով անցան մըրիկները և ջնջվեցին բուլը գրերը, և հանգիստ շնչող գեղեցիկ որերում հրաշալի յերգեր են յերգում նրանց՝ կիսամոռացված ստվերների մասին։

Անցնում եյին Յերկաթե գլովիդիայի մասերը, տարորինակ բազմապիսի հաղուստներով՝ գուսարական վենգերկաներով և սպայական պողպատագույն շինելներով։ Բանակի հրամանատարին եյին լարվում նրանց արշավներից և կոփվենոից կոպտացած աչքերը—և նրանց մեջ նույն առանձնացած, հանգստի ոտար, անտուն մի ինչ վոր բան կար, վոր հարազատ եր և հրամանատարին։ Անցնում եյին տափակագունչ զրահապատները, անաչք և անմարդաբնակ, կուրորեն վոլորելով գնդացիների վորոնիչները։ Հսկայական թրթուռների պես, վոռնալով սողում եյին գունձավոր հողաբարդ տանկերը, այն տանկերը, վորոնց նվաճման մասին ծաղրանքով կանչում եր խորհրդային սպղուռն Փարիզում։ Նրանց ներսում զեռ սրբված չեր լիովին սպիտակ տանկավարների արյունը Յեկ կենդանի մնացած սպիտակ տանկավարները վարում եյին այժմ տանկերը ցերեմոնիալ մարշի կարգով։ հասնելով բանակի հրամանատարին, նրանք ստիպեցին հոլի պես պտավիկ տանկերի հրեշային մարմինները՝ տանկերը պատվո նշան եյին տալիս բանակի հրամանատարին։ Վողջը երար եր անցեր, Լրագըների թղթակիցները վազում եյին մոտակա խրճիթները և ներքնահարկերը իրենց լուսանկարչական կամերաները լցնելու համար, ժողովուրդը նայում եր ու հիանում։ Մթնշաղն եր ընկնում, մթագնելով ավագները։

Յերեկոյանալով, գնում եյին շարքերը հեռուն, դեպի արնագույն—կարմիր փոշին, դեպի առմիշտը։ Ավելի ևս գածան ու հատու փչում եր քամին դեպի ծովածոցը։ Դեպի ալիքներն ու դեպի աղոտությունն եր թուշում փողերի կոկորդային հնչունը, կորչելով անեղբության մեջ։

VI

Մի որ ել անցավ։

Յերեկոյան — Դայիլրում — հրեղեն տառերով վառվում եր՝ Գլխավոր հրամանատարի շտաբի շտաբի տեղեկությունը՝ «կարմիրներն անցան դիրքային պատերազմի»։ Մեր գորամասերը վերջացնում են իրենց վերախմբավորումը, պատրաստվելով բոյլշեկյան բանակների հերթական խորտակման Բոլոր ճակատներում հանգստություն ե տիրում։

Յեկ մի բոպե հետո՝

—ԴՈՐԵ—

ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԱՆԺԵԼԻԿԱ ԱՍՏԻ

«ԲՈԼԵՏԻ ԲԵՄԸ ԲԱՅ Ե ՄԻՒՆՉԵՎ ԼՈՒՅՇ: ԵԼԵԳԱՆՑ

ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ»

Սակայն մեկը արդեն կռահել եր ծովափի կարմիր լավաների մասին, ֆաղտնի խուսափուկ բորսայում վճարում եյին խելառ գներ—բրիլիանտ և վոսկի, զլխավոր համանասարի առանձնասահնյակում անկեղ պահարանում պահված եվակուացիայի պլանի մեջ մտնելու համար։ Փողոցներում շրջում եղ խուճապային շուկա։ Դրեղնոուտները նավակայանում ծխում եյին մոռյլ և առեղծվածորան։

Գիշերը այդ դաշտամիջի քաղաքում վառվում եյին ջահերը և շարվում եր գեներալ Ռբորովիչի կորպուսը։ Աստղալի յերկնքի տակ գեներալը, վերցնելով գլխարկը, ասեց։

Մնաք բարյավ, յեղբայրներ! հիշեք, վոր կովի գնալով, մենք մեղ արդեն սպանված պետք ե համարենք Ռուսիայի համար։

Կորպուսը ուղարկվում եր մարտական ռեզերվ՝ այդ կորպուսը պահում եյին վճռական մոմենտի համար։ Առաջին հերթին դաշտ եր արշավում սպայական եսկադրոնը։ Անհոգ լոթության ծիծաղով կորավ այդ եսկադրոնն Անապատում, և այնտեղ նրա յետեռում գոցվեց գիշերը առ միշտ։

Յեկ ավելի ուշ — Պերվո-Նիկոլայևկա զյուղում, վոր գտնվում եր ծովածոցի աջ ափին, այս եր տեղի ունենում։

Կարմիր բանակային Միկելինը, նստած զըշանային գործկոմի շենքում շիկացած վառարանի առաջ (այդ շենքում եր տեղավորված դասակը), կերավ ճրագուի վերջին կառը, այն դանակով կարտելով, բերանը սրբեց լաթով, և ատամը չմփացնելով, ասեց հատակի վրա յերեսն ի վար պառկած ընկերոջը։

— Վերջացրի, Յուղեֆկա! Սատանան տանի, ինչ համեղ ձրագու յեր!...

Յեկ պառկեց նրա կողքին։

Խրճիթը մտավ գործկոմի քարտուղարը, միակնանի մի ինվալիդ, վորի հոգին հանել եյին զինվորների գոջիները։ Անքնությունից վճուկ եր վաղվա տոնի—տարեգարձի—համար վորոշ պատրաստություններ տեսնելու։ Նա բարձրացավ դարակների վրա և սկսեց մաքրել ղեկավարների պատկերները, հետո գրասենյակային պահարանից դուրս քաշեց յերկու կարմիր կապոց։ Զայն տվեց զինվորներին։

— Հեշ չե, ոգնեցնեք լոգունգներ կախելու, հեյ!

Վոչ վոք չբարձրացավ տեղից՝ բոլորը քնած եյին և կամ, աչքերը խփած, փափկանում եյին, ցիգարկաները ծխելով։ Միակնանին մի պլակատը ձգեց ամբողջ պատոհանի լոյնությամբ, սակայն մյուս պլակատի համար տեղ չեր մնում, ասենք, մենակ աշխատելու ել տրամադիր չեր։ Միկելինը բարձրացրեց գլուխը և անգործությունից ստիպված կարդաց՝

— Մենք — աշխարհին — նոր — ուղի — ցույց — կամ ք...։

Քարտուղարը մոտ նստեց վառարանին ու ննջեց։ Կես գիշերին հրամայեցին հավաքվել։ Զորամասը պիտի գնաք առաջին կարգերում, նրանց բաժանեցին յերկաթալարերը կարելու մկրատներ և ոռոմբեր։ Միկելինը ձգեց գոտին, նայեց քնած քարառողարի վրա և աշքով անելով, վերցրեց մնացած կարմիր կապոցը։

Կանգնած եր անհուն, անեղը մի գիշեր։ Տաք սենյակից դուրս յեկածները քնաւատորեն դողում եյին։ Զոկատապետը անցնում եր, մարզկանց համարելով։

— Ամենից առաջ, ախպերափք, առանց զալմաղալի, վոչ մի ծպտուն... Մենք նրան տան մեջ կենդանի կճանկենք! լսել հրամանները...։

Անհուն սեի մեջ հեռու հեռվում սպիտակ հրդեհներ եյին խայտում, թոթում, յերերում և բռնկվում կրակներ՝ աջ կողմում, դարատափի յետեռում զղայնացած փորձում եյին ու շոշափում գիշերը պլրութեկտորներն ու ուակետները։ Ծովածոցում և ծովածոցի առաջ կանգնած եր խուլ մշտը և ուր վոր միայն շըշում եր և տաղնապալի զղրդում գետինը։ Այդ գետի ափն եյին շարժվում բյուրավորները, քարշ տալով իրենց յետերից թնդանոթները։

Անցան շատ մութ շենքերով գեպի զյուղավերջը, մոտեցան շեպին: Շեպերից հետո սկսվում եր հողմերից չորսած ծովի հունը: Միկեշինը մի կողմ հեռացավ, հանեց կոշիկները և արագ, վոտքի վրա, վոտքերին փաթաթեց ոլակատը՝ հին կոշիկները փտել եյին, իսկ զինվորները ասում եյին, վոր յերեխ ծովի վրայով կդնան: Նրանց առաջ, գետնի վրա յերեռմ եյին ծիրանագույն ստվերներ—ափին, նրանց յետեռմ, խարույկներ եյին այրում, վորպեսզի գնացողները չմոլորվեն:

Յեվ աջից հեռու—հեռվում յերեռում եյին սպիտակ հրեհները: Նրանք լուսավորում եյին զատարկ դաշտերը, ուր վոչ վոք չեր յերեռմ: Իսկ գեպի չոր ծովը մշուշից իջնում եյին բյուր-բյուրավորները, իսկ շեպերի վրա յերկաթե դպրոցով անցան թնդանոթները, վորոնց ուղեկցում եր կակուղ խուլ խրխինջը, թնդանոթները զլորվում եյին գեպի խամ շառավիղը: Ասաջինները արդեն հեռու եյին: Հետզհետե չքացան և խարույկները, միայն նրանց լույսն եր բոցկտում խաբուսիկ, ստվերամած: Միկեշինը ասաց Յուղիփին՝ «Արի, ախպեր, իրարուց չբաժանվենք»... և ահա ամեն ինչ անձայն ե, սև և մոայլ կարծես հատակում...

Մի ժամ հետո հիսնապետը ինչ վոր կահեց և շշնջաց՝ «պառկիր»!... Այն ժամանակ կպան հողին մարդիկ և ոռշացին հեռու, ատամները սեղմած...

Այսպես սկսվեց բանակի հրամանատար Ն-ի հոչկավոր հարգածը:

Վողջ գիշերը լուռ եյին ապարատները:

Իսկ արշալոյսից մթագնած ամպերը ծովից չվեցին յերկրի վրա: Տարածության մեջ սողում եյին ամպերի վոհմակներ — անլսելի, զորեղ, անհուն: Արշալոյսին տագնապով զանգում եյին բանակի հրամանատարի առանձնասենյակին: — Հողմեր են փշում հարավից, ութ բալլի ուժ ունեն... — Անքուն առանձնասենյակից հաստատ և հատակ քայլերը դիմեցին նախասենյակների աղջամուղից զեպի ապարատները: Կապարե լուսաբացը նայում եր պատուհանից ներս: Լուսաբաց եր արդյոք, ո՞ր եր, թե տարիներ եյին: Յեվ նորից —

— Ծովածոցից այն կողմ գտնվող զորամասերի հետ կապը խախտված եւ Ծովափի վրա թնդանոթածգություն է լսվում: Հյուսիսում, գարատափի առաջ, պառկած եյին գունդերը՝ սպասում եյին: Ահա պետք և վոր բոնկվեյին կանչերով, չեռվի — գարատափից այնկողմ — բոցերով, դղրդային ծովից մոլորվածների, գեռ չհավատացողների խորքը: և այն ժամանակ հյուսիսից — ճոճացող հոսանքով պիտի տեղային դարատափի հանդեպ — աղաղակով, արնաշաղախ թրատումով, գեմ առ գեմ: Սակայն ամպերում, ծանր, դաժան զանգվածների մոայլ գագաթները լիզող ամպերում արգեն բարձրանում եր լուսաբացը, իսկ լեռնաշերտերի յետեռում դադար առած — պահակում եյին հազարավորները, խորամանկ, աչալուրջ: — Իսկ հեռվինները լուռ եյին... Լուսաբացին, չսպասելով մոլեզնած հոսանքով արշավողներին, վոր զգուշաբար թիկնել եյին գետնին, խուժեց գեպի դարատափը — և ջախախվեց քարերի վրա, յետ խուժեց, պառկեց մարդկային զանգվածներով փոսերում և պլացդարմի միզապատ տարածությունների վրա... .

Ծովից քամի յեր փչում:

Յեվ ծովից փախչում եր առվակներով, գորշ — կեղտոտ գույնի լճակներով — փախչում եր աղոտ բարձունքների տատառնումներով, լցոնում եր հազարավոր վոտքերով փիրացված ծովածոցի հատակը: Ամեն ըովե խորացող ցեխերի և լճերի մեջ չմիտում եյին հեռացողներին հետապնդող ուղերդները: Ասես կապարե զոտի եյին դառել ջրերը և կապարե զոտով փակել եյին ափերը, ջրերում եյին թաղվում ուղիները: Ուղիններ չկային:

Յեվ նորից —

— Անմիջապես, ըստ բանակի հրամանատարի հրամանի... — Բոլոր միջոցները սպառված են: կապ չկա... . Լուսաբացին մըրկահոս խփեց ծովից: Այդ նրանք, գեպի ծովը շպրտվածները, ափին սեղմված բազմությունը — ծովին սեղմված բազմությունը — դղրդացնում եյին մառախուզները: Դեպի ծովից եյին արշավում ուղերժները՝ հոգնատանջ մինչեւ ծնկները ջրի մեջ. ափից գեպի ջուրն եյին դուրս քշում ամբողջ գյուղեր՝ ծովը պատնեշներով սանձահարելու: Գյու-

դերը չլմփում եյին ջրում, խըվում եյին ծույլ, սուզվող սայ-
լակներով, աճում եյին պատնշաները — սողոսկ, յերերուն,
ալմոր — և հալվում եյին իսկույն՝ հողմն ու ջրերն եյին կլա-
նում նրանց:

Բանակի հրամանատարը կանգնած եր ապարատի մոտ՝
գորշ, ինչպես ստվեր, յերկաթյա անքուն գիշերից հետո, —
գուցե յեղակի գիշեր իր կյանքում և պատմության մեջ:
Սապարատները լուռ եյին... և հանկարծ — հեռավոր, կուրաց-
նող յերազների աշխարհից, — աղաղակեց՝

— Պատրաստ եւ ժամը տասներկուսին առանց մի հրա-
ցան պարպելու գրավված ե դարատափը: Հակառակորդը
փախավ, հետապնդվելով թիկունքից կարմիր դիվիդիաներից:
Միացած զորամասերը գրոհում են ենշունի ամրություն-
ների առաջավոր զիծը:

Բանակը դարատափի այն կողմն եր: Սահմանը անցած
եր: Գնդերը պառկած եյին պարանոցի սոլոնչակյին պլա-
տոյի վրա — արգելեների վերջին յերեք գծերի առաջ, վոր
շրջապատել եյին ծովի նեղ դեֆիլեն: Վաթսուն վերստ
հեռավորության վրա յերկաթալարերի փշերի միջից — կոփ-
ների ծխի միջից — բանակի հրամանատարը տեսնում եր
արդեն հովիտների յերջանիկ կապույտը...

Բանակի ավտոները թռչում եյին դեպի դարատափը:
Զիալոր-պարտիզանական դիվիդիաներին, վոր դեռ դանդա-
ղում եյին ծովածոցի մոտ, հրամայված եր՝ անցնել դարա-
տափից դեպի պարանոցը: Բայց դարատափով պետք եր
անցնել տասներկու վերստ, իսկ պարանոցի վրա արդեն
գրղոց եր շնչում, դողում եր գետինը. այնտեղ սկսվել եր...
Յեկ խոպոտ անհամբերությունից ու զայրույթից, ձիավոր-
ները սլացան ափով, խուժեցին ինչպես մի հորդա — ջրերի
մեջ, դեպի յեռացող մբուրը... .

VII

Մի որ եր — կյանքում եր արդյոք, թե յերազում, — նրա
մշուշում ննացին ալիքների ալմոր շփումը, ում վոր հաս-
կանակի տեղափոխությունները ծովափի մշուշներում — դեպի
առաջ — յետ, սահմանը անցնողների դատապարտվածությունը

գաղաղածների հառաջներն ու հայհոյանքը, անըդհատ կափ-
կափը, լուսաբացի լույսի տակ այրված շեների դալկությունը:
Խրճիթում՝ միայն մի բողի մնաց Միկեշինը, շրմփացնելով
իր ազգը երը հատակի վրա, յետ գցեց ձեռքով քրտնած մա-
զերը և խմում եր ջուրը, ծանր չունչ քաշելով, ամանից:

— Այ ինչ. ջուր ե այստեղի ջուրը, Յուղեփկա! Աղի-աղի,
ես ջրից հետո ավելի յետ ծարավում... այ ինչ տեղ ել հը...

Յեկ հետո Յուղեփկը պառկած եր կողքին, բլրակի յետեր,
կապույտ լճերի աղջամուղջի մեջ, և այդ փութանցիկ հրե-
ճայթյունին եր տալիս իր փայը, ականջը զոնդաղին հենե-
լով, հազիբ բարձրացնելով աչքերը՝ հոգնած ու փոս ընկած—
ինչ անուրջ կա, և ինչ ցավ սրանից հետո... իսկ առջևում
վոռնում եր, դղրդում յերկաթը լճերի կողմից, մըրկում եր
յետերից, անջրդի սոլոնչակների կողմից, հրերով բարձրա-
նում եր փոշին, և փոշու ծալքերում, փոշու և ծխի գիշեր-
ներում բութ և ծույլ սողում եյին խաղաշար գորշ զանգ-
փածները դեպի լճերի կապույտը....

— Են զագն և հա! — ձչաց Միկեշինը: Այ կճմէն հիմա!
Խաչակնքիր յերհադ, Յուղեփկա!...

Տանկերը գնում եյին գեֆիլեյի առաջին գիծը ձեղքելոււ
Տան մոտ, հինգ գերստ հեռավորության վրա նստած եր
բանակի հրամանատարը գիվիզիաների պետերի և շտարերի
հետ՝ տանկերը նրա կամքն եյին: Տանկերից հետո պետք
եր գեպի ճեղքվածքը նետել ամբողջ բանակը — գեպի վերջին,
Դայիրյան դաշտը: Յեկ մի ըոպե կանգ առավ հեռվում հա-
րյուրավոր գնդացիրների կափկափը և միայն դղրդում եր
յերկաթը: Դղրդ շնչելով գետինը — տանկերը մոտեցել եյին
խրամատներին և անդադար ոմբակոծում եյին լճերի կող-
մից մորափեները: Յեկ հանկարծ ձախից թիթիկաց, յեր-
գեց, զզաց պղնձե թելերով, ոլացավ գեպի վեր, — և դաշ-
տում գեպի լճերն եյին վաղում բլրակի յետերից բարձրա-
ցողները, վազում եյին կուցած գեպի աղմուկն ու գլորդը,
ուր տանկերը ճմոթում եյին վոսկորները, տախտակն ու
յերկաթը, բլուրների այն կողմից գալիս եյին կըկին, կուսնում
եյին և նույնպես վազում, իսկ նրանց յետերից տատանվում
եր գեռ մասսաների անվերջ դաշտը — մինչ դաշտերի սահ-

ժանները, մինչև պղտոր իրիկնաղեմ ծովախորշերը։ Յերեկոյ յեր, նոյեմբեր 7-ի պատմական յերեկոն — Ենշունի ղեֆիլեյի ձախ սեկտորը առաջին անգամ ճեղքվեց։

Մի վերստանոց մասշտաբի քարտեղի վրա բանակի հրամանատարը նիշում եր շարժման մատեմատիկորեն ստույգ պարաբոները։ Նա կարծում եր՝ զործը արդեն ափարտված է, վերջ։

Բայց առ բոլորը չեր, կանկների այն կողմը կանգնած եր գեներալ Որորովիչի թարմ, գործում չեղած կորպուսը, վոր պահպած եր վերջի համար։ Յեկ ահա ժամը՝ հասել եր, Յերբ սպիտակների ձախ սեկտորը, արնաշաղախ ու ջարդված, զլորվեց դեպի ծակող յեկաթալարերի յերկորդ ցանցը, իսկ հետիոտը նրանց հետապնդում եր յերկաթով, — ճակատելով, տանկերի գուղձերով կորպուսը դուրս պրծավ աջից, ցրելով լայնարձակ դաշտերի մեջ ճիշավոր իր ֆալանգները։ Այդ սրերի սպանիչ պատույտով, աչերի աղոտ ցրտով — կենդանի մարդկանց տաք և վոտնահարվող ճեղքվածքների մեջ եյին մղում նրանք — վորոնք արգեն սպանված եյին։

Կայրկենապես ճեղքվեց աջ սեկտորի դեմ կանգնած հետիոտի բարակ ծածկոցը։ Զիավորները լցվում եյին արդեն թիկունքից կատաղաձ՝ մթերագնացքի մեջ, քայլող ռեզերվների մեջ, շրջված, զլուխները ճեռքերի մեջ պահած մարդկանց լավաների մեջ, Կորպուսը շրջապատում եր բանակի թեր։ Յեկ քիչ հեռու, աջից, կորպուսը մոտենում եր բանակի թիկունքին։ Բանակի վրա ճոճում եր կատաղի հարվածը։

Ճանապարհների վրա, արշավորդ բանակի թիկունքում տագնապ եր։ Հեռուներում ծածանվում եյին մասսաների մեջքերը, ճիշերն ու աղաղակը լսվում եյին ըլուրների յետերից։ Այն տան մոտ, վորտեղ հաստատվել եր շտարը, Փելդյեգերների ձիերը կտրում եյին կապերը, ծառս բարձրանում ե սմբակներով ճեծում ավտոների լակածածկ թերը։ Բանակի հրամանատարը դուրս յեկավ և նայում եր դաշտերին, այնտեղ խառնություն եր տիրում։

Կորպուսը բանակի թիկունքն եր անցնում, բանակը «տոպրակի» մեջ գցելով՝ դիմիլեյի և ծովացոցի միջև։ Կորպուսի առաջ, ընկած սլանում եր սպայական եսկաղըոնը՝

քաջ, անհոգ ծիծաղելով, մղվում եր մահի։ Ազահ բացվում եյին պնչերը — և արագ կորուստի մեջ, և յերեկոյի և մասսաների գաղանային շարժման մեջ զգացվում եր մի սուր կյանք, մի արբեցոցիչ, այրող — թմբեցնող զինի նրանք, վորոնց անցյալը կարծրացած եր դարավոր տիրականությամբ, հավատում եյին հանճարեղ մանյովքի ուժին, և վայրի, վորոնացող և իրար անցած անգլուխ բազմության թեթեռըն հաղթելու վիճակին։

Բանակի հրամանատարը հանգիստ եր, գուցե այն պատճառվ, վոր գիտեր մասսաների որենքը։ Բանակի հրամանատարը ֆելզյեգերներ եր ուղարկում ծիավոր-պարտիզանական դիվիզիաները, հրամայելով ոգնության արշավել զորամասերին։ Սակայն ֆելզյեգերները դեռ տեղ չհասած՝ դիվիզիաները իսքնաբերաբար գուրս եյին գալիս՝ ջրից ու հոգնությունից թրջված, իրենց սայլակներն ու գնդացիրները ծովի միջով քարշ տալուց հետո — նրանք գնում եյին ճամբարանալու դեպի յայլաները — ուր կաթ կար, և միս և մեղք։ Յեկ մի բան ևս — նրանք խմել եյին ուզում։

Հորիզոններում — ծովածոցից մինչև ծովածոց սև սղոցի նման յերերելով, ծանը սլանում եր ձիերով, յափնջիների, սայլակների, թափահարվող յալերի հոսանքը դեպի իրիկնամուտ։ Սա վերջն եր՝ Ծովածոցի և բանակի խոնգածքի միջի ճեղքվածքի դեմ, հսկայական կիսաշրջան կազմելով, փակում եյին սայլակները, իրենց դեմ դնելով սլացող ֆալանգների կատաղի անկման։

Չափ սեկտորին դեռ նոր եր թիկունքից հասել տագնապը։ Հետիոտը չգիտեր՝ ուր գնալ, գունձավոր հսկաները, գնդացիրները վեր ուղղած, յետ եյին սողում, ուղղակի նրանց վրա եյին կրակում մոտեցած թնդանոթները։ Ջրապտոյտի մեջ կանգնած եր աճագին Միկելինը, վոտքերին փաթաթած արնագույն — կարմիր փաթաթաները, վոտքերը համառորեն չուած, աղաղակում եր արշավողների կողմը։

— Յուզեֆ! Յուզեֆ! Ո՞ւր ես։ Արի չբաժանվենք իրարից։ Հեռանում են, լսիր, Յուզեֆ!...

Յերկրորդ գծից զաղանացած դուրս եյին պլծնում հեռացողներին հետապնդելու. զղորդ եր, շունդ, կայծակներ

Կյին թոշում պողպատե յերախներից, վոր գնդակահարում եյին հենց այնտեղ, կարտեչով... Գետանի վրա, տիեզերական զառանցանքի մեջ, հազարների վոտքերի աակ ընկած եր Յուղեքը—մի կողքի վրա, կուչ յեկած, հողային և որորված... կամ գուցե նա չե, և ելի հարյուրավոր ուրիշները: Նրանց գլխին կանգնած, աղաղակում եր Միկելինը, դղրդյունի մեջ բաց անելով ասես անխոս բերանը:

— Բ ը ա տ ի շ է կ ա, միթք քեղ դիպավ հը: Զանս Յուղեփ, լսիր! Եհ, ինչ ընկեր ե-ը-ե!

Կողքին մթնշաղից խրվում եր փախչողների մեջ ջոկատապետը քաշալ մի նավաստի, մատուցերը ճոճելով ու ճչալով՝

— Փախչել: Շկուրնիկներ, Վախկոտներ! Իսկ հեղափոխությունը, ձեր հոր աստվածը, ձեր մերը... հենց առաջինին տեղն ու տեղը... ինքս!... յետ!!

Այդ վայրկյանին յետ ու առաջ սկսեց սլանալ սայլակների կիսաշրջանը՝ նրանց վրա վլլեցին, ձիյերի խոսոցներով՝ եսկաղընները: Յեկ տեղաց կրակ—սայլակներից, անոնի, շարժուն, փախչող, գնդացիրների անտեսանելի սրերով հընձող—սայլակներից: Զիյերի ամպերին կրվում եյին սայլակների գնդակային հոսանքները, թրատում եյին, կտրում, սլանալով, կոլոննաներով ամբողջ գետին եյին գցում. դատարկ ձիյերը, աղմուկով ու գլխները թափ տալով, սլանում եյին վայրի դեպի մութը: Թափում եյին, անջատվում ջարդված վոսկորները, սեանում եյին բերանները, վոր դեռ յերեկ գուրգուրալի համբուրել եյին սիրուհիները, վոտնահարած արյան խմոր եյին դարձել փողոցները, լույսի շատրվանները, կուլտուրայի կատարելությունը, տիրականության հանդիսավոր հիմները... Իսկ սայլակները սլանում եյին յետ և առաջ պառկածների վրայով, ճռչացնելով ժանգոտ սոնիները: Սլանում եր Պետուխովը կառքով, ֆրենչը հագին, ցիգարկան բերանում, թևերը փուծ, իսկ յետնից շեկը, տատամները սեղմած, թխկացնում եր գնդացիրը, դղրդում եր, խուլ ճղոցներով յերգում մահը,

Յեկ ֆլանգներից, սայլակների յետնից դուրս պրծան, հարձակվելով, ձիավորները ճչալով՝ «Ճաء-օ-օշին!», գիշերում անտեսանելի բարձրացրած բուռնցքների, նիզակների, յա-

փնջիների, թափահարվող յալերի մասսայով: Դեպի յետ, դեպի աջ սեկտորն եր հեռանում արնածոր կորպուսը: Իսկ դեպի ձախ սեկտորը, դեպի ճեղքվածքը վազում եյին նորից մատրոսն ու Միկելինը, իսկ նրանց յետնից քրտնած, խոպոտ, և ծարավից չար հոսանքը՝ «Ճաء-օ-օշին!» — և ահա յերկրորդ գծի մոտ ընկավ նավաստին, յերկաթալարից կախված այնպես, վոր գլուխը հասնում եր գետին, — իսկ դեպի ձախ — կատաղի աղմկող ձիյերի յերամի մեջ պացող, վայր ընկավ նա — յափնջավորը, և պեկներով, վայր գլորվեց ձիու հետ միասին այնպես, վոր ջախջախված գլուխը մնաց ձիու վզի տակ: Յեկ նրանց յետնից ու նրանց վրայով գեղի յերկաթալարերի ցանցը, փոսերն ու բլինդաժներն եյին ալանում սայլակները, փախչում եր հետիոտը, թոշում ձիավորները, հեռանում եյին վերջինների մնացորդները, յետ նայելով իրենց խավար, դուրս ընկած աչքերով:

Գիշերվա դեմ անցան ամբությունների մոտից, զաշտի գետակից ջուր խմեցին — Միկելինը յերեսնիվար պառկեց և հրացանի կոթով փորելով սառույցը, խմեց և ապա քարացածի պես քնեց այստեղ, ափին: Յեկ դեռ շատ-շատերը պառկեցին և քնեցին: Յեկ յերազների մեջ — կրակների, սարսափի և արյան միջից — խաղաղությամբ եյին շողում մշուներում լույսերը:

Գիշերը, հարյուր վերստ դեպի արևելք, Անթառի հրվանդանի մոտ, շարժվեցին դարձալ բազմությունները և կես գիշերին մոտեցան նեղուցքին: Գնում եյին մինչ գոտիները ջուրը մտած, ափերի վրա վառվում եյին խարույկների ամրոխները, բարձրացած կամրջի բացերի մեջ ջահերի պես վառվում եյին նավթի տակառները, թափանցելով լույսի կիսաշրջանով գիշերը: Հակառակորդը հեռացավ: Այդ լույսերի տակ բանակը տիրեց նեղուցքին և բազմությունը խմում եր անուշ ջուրը մյուս ափին և քարի պես ծանր ընկնում ու քնում հակառակորդի վոտքերից տաք գետնի վրա:

Յեկ բանակի հրամանատարը հեռավոր խրճիթում, պառկած ձիու քրտնոցի վրա, շինելը գլխին առած, քնած եր, քնած շեր — տեսնում եր լույսերը անդունդներից կախված, և սկ յերազներից դեպի դարերը սլացող:

Գիշերը հակառակորդը հեռացավ հետապնդող զորամասերից և չքացավ դաշտերի մեջ: Առաջ եյին նետված ձիավոր — պարտիզանական դիվիզիաները, վորպեսզի թշնամու առաջն առնեն ու թոյլ չտան նավերը նստելու: Իսկ դարասափի, — հյուսիսի կողմից գալիս եյին սեղերթները դանդաղ, շինեները ուսերին գցած, նրանց յետեկից ձգվում եյին և սայլաշարքերը: Ռեզերվները գալիս եյին յերեք որվա ճանապարհներից ու կոփերներից հոգնածներին փոխարինելու: Բայց ռազմական մասերը յեկողներին դիմավորեցին հայնոյանքներով և ծաղրով և փոխվել չկամեցան — նրանց առաջ արդեն շողում եյին Դայիրի կաթնագույն — կապույտ հովիտները: Ռեզերվի բրիգադները նույնպես չեյին կամենում թիկունքում մնալ, նրանց գնդերը մի կերպ խրվեցին Պենգենսկիյ և Յերկաթե գնդերի միջև, և լուսաբացին, հազարամայն ճոխնչով ու դղիրդով, բանակը մեծ ճանապարհով մեկնեց դեպի հարավ:

Յեվ աջ Փլանդի Անդրվոլցյան բանակը, աջ կողմն անցնելով, դուս եր գալիս դեպի Դայիրի ճանապարհը: Մանյովի շնորհիվ ուշանալով, նա այնտեղ հանդիպել եր շատ առաջ անցած N բանակի մթերագնացքին: Սակայն բանակը չեր ուզում վերջին հերթին հասնել, նա շեղեց դեպի շառավիղները և այնտեղ սլացավ սայլակներով ու կառքերով, շնչակառը հետիւոտվ, արագ քարշ տալով արտիլերիան, դեն շպրտելով մնացած թշնամները դաշտային գետակների վրայից անցկացրած խորտակվող յերերուն կամուրջներից, իսկ թիկունքներից շարժվեց ձիավոր — պարտիզանական դիվիզիան — ուղղակի խամ, աշնան հողմի սափրած և սպիտակների սմբակներով հարթված ճանապարհով — յերեք բանակ կռնկուի թոշում եյին դեպի կողիների հեռուն: Մոտիկ ու ավելի մոտիկ եյին թվում լքած հարստությունները քաղաքների, տանիքների վոսկին եր վառվում ասես հեքյաթների միջից... Զորացած բերաններով վազում եր քրտնած, հոգնած յերազներով մզվող չուն...

Առաջում, շատ հեռուն ցրվում եյին դաշտերի շառավիղներով թշնամու բանակները դեպի նավերը: Արհամարանքի

ժաղդում շեղվում եյին նրանցից Ոբորովիչի վերջին մեռածները Սրանքնեյին ուղում հեռանալ — ծածկվելով լեռներում, սպասում եյին հյուսիսից յեկողներին, վորպեսզի հարձակվեն, սպանեն և նորից մեռնեն:

Յեվ հեռվում — մըրկող մըրուրում պատովում եյին փախչողների նավերը: Դեռ ափի վրա բեռնում եյին, ամբոխներ եյին վազում ամբարտակների վրայով, վոտնահարելով թողած կապոցներն ու հակերը, փախչողների վոտքերի տակ որորոցի պես կախվում եյին նավասանդուխքները, ափից ազաղակում եյին և նզովում մնացածները, շչակները ափից ձչում եյին մուայլ ճիչերը իրանց վերահաս սարսափելի՝ հատուցման և մահվան: Նավերի սկ ծուխը չեր իջնում տատանվող ջրերի վրա, գիշերվածին պես սողում եր առափնյա, վայրի խառնության գիշերն եր գալիս:

Դիշերում հեռավոր դորբ: Ավելի մոտ ու մոտ եր քաղաքներին — խարույկների ստվերներով յեռացած:

Բանակի հրամանատարը լուսաբացին դուրս յելավ — դաշտում հատարկ եյին արտերը, խորտակված շնորհի ավերակների վրա ջերմանում եր յեղյամը, կուրգաններից այն կողմը լուս, ահազին բարձրանում եր արշալույսը, ինչպես սահման ժամանակների: Գիշերը թվում եր իրքի սկ ննջող դարպաններ, վոր բարձրացել եյին մինչ գագաթները: Խուլ ձայնով գոչում եր մոտորը, հարթ թերուով կլանելով տարածությունը, յերեացող, ձիյերի գիշերով շրջապատված ճանապարհը, վորորապտույտ յետ եր փախչում: Դիակներ... ուռած կողերով դիակներ... բացված ճնշուներով: հորիզոնից այն կողմ զարձյալ դիակներ, անշարժ, ինչպես իրեր: Հազարներ, հազարներից գոյացած փողոցներ: Յեվ աղմուկը լսելով, դիակներ շների վոհմակները, վորերը գետնաքարշ յետ եյին սողում արտից, բերանները լիզելով, նայում եյին ճանապարհին մանշակագույն, արյունուտ, հեղտանքից պղտոր աչքերով...

Պատմության մթնշաղում կիսաքուն պառկած եյին անեղբարտերը, ներս ընկած, ինչպես անդունդներից դեպի արշալույս բարձրացած մի թամ...

Այդ ինչպես պատահեց: Արդեն անցավ սահմանը: Անեղբարտերը մեջ կորչում եյին կուրգանները, ինչպես սկ առաջ

վրտյան — սաղավարթ։ Յետ գեպի աղջամուղջը, պատմությունը, Յետեռում,ուր վոր լուսաբացին փովել եր կովի դաշտը, վոր գեռ արյունով, ճիչերով և ծիերով եր զառանցում, անտեր թողած, դեռ գյուղերի կողմից իբրև վառելիք չժամանված կանգնած են արգելակները ծակող յերկաթալարերով, վուլած եր սպանողների յերկաթը, վուկորները, կենդանիների թորանքը, փոսերը մութի Քամին տարութերում և յերկաթե իշերի վրա անմիտ-խելագար ալացող թափչքում կախ քնկած յափնջու կտորները։ Յեկ խաղաղությունն և հոսում կովի դաշտի վրա — որվա դատարկության լությունը. հոսում են ժամանակները, նետվելով մոռացության անմեկնելի շերտերը...

Մթնշաղից առաջ ավանդարդը մտավ Դայիր։ Հրապարակներում սմբակները ընչեցին դատարկ ու արձագանքվող։ Ավանդարդը ուղացավ դեպի յերեք վողոցների անկյունը, ուր մայթերի քարե հյուսվածքի վրա յերկնահաս տան պատերից կախվել եյին աներեր, ինչպես մետաղ, ալ դրոշները։ Հեղկոմ։ Պատշտամբի տակ, ճոճելով նիղակները, ավանդարդը ճշաց իր վայրի և զվարթ կանչը։ Յեկ վերեից, ճաղերի յետերց, զվարթ, հենվում եյին, փոքր, անչափ ճարպիկ, պիցակներ հագած, անդիխարկ մարդիկ, շարժում եյին ձեռքերը, աղաղակում դեպի հոսող ճոճացողները՝

— ...Վողջունում ենք...

— ...Թող լսեն աշխարհի հալածված մասսաները...

— ...Կեցցե!...

Հեռու-հեռուներից, ասես մակընթացություն, սլանալով գալիս եյին ձիավորները, տարածելով վողոցներում սայլակների ճիչն ու սմբակների կոտորակը։ Ներքեցից գլխարկներ եյին վեր զցում, յետ ընկած յերեսների հազարավոր աչքերը նայում եյին վեր — դահավիժող ալին, յերկնահաս շենքերի ալեբաստրե քիմերներին, կուլտուրանների քարե կամարներին — այնտեղ յերաժտախմբերն եյին ծփում փառաց ալիքներով — բաց, չորացած բողադներից, ճնշված կրծքերը

— Ա-ա-ա-ա!

Ռայրամասերից, նավաշինարաններից, աղքատների նկուղներից գալիս եյին գետնից բարձրացածները, ճնշելով փողոցները իրենց բազմությամբ, յերերելով ալ չերը հազարգլխանի տատանվող ովկիանոսի վրա, աղջամուղջային խորքերից հեծում եր՝

— ...Ա-ա-ա-ա!

Նավահանգստում բարձրանում եր գուղձերով՝ բացված պակնառուների և պահեստների առատությունը — հակեր, արկղներ, մեքենաների իրաններ, վոր շնչասպան կանգ եյին առել իրենց ընթացքում։ Զիավորների շղթաները շրջապատեցին ափերն ու նավահանգիստը, պահակում եյին ծխելով և նայելով չտեսնված հազարամյա հեռուն՝ տատանումը գնում եր գեպի այն կողմ կանաչագույն արտացոլումով, կարծես հորիզոնից բարձրանում եր լուսաբացը։

Փողոցները բռնկվեցին կապույտ, անսահման հեռացող կրակներից։ Հազարավորների ծիծաղկուն զարմացած աչքերը նայում եյին լույսերին, ինչպես առավոտին։ Հարկերից, ապակյա դռներից դուրս եյին գալիս անվտան, ցած եյին իջնում դեպի ասֆալտը, կուչյեկած, գգվալի ու վախկոտ ժպիտը յերեսներին, շարժում եյին բարակ ձեռնափայտերը — մենք ել ուրախ ենք, մենք ել այստեղ ենք!... Դուրս եյին գալիս համարձակված կանայք շվարված յերեսներով, աչերի քաղցր ջերմով, շնչալով և ժպտալով քամուց կոպտացած գիշատիչ հայացքով նայող գալիքիներին։ Պղտոր կամարակապ-ճահճային աչքով նայում եր յերեկվանը, մարելով...

Սկ նըրափողցի առանձնատան մեջ, վոր շրջապատված եր մոայլ և լուռ ձիավորներով, դատապարտեցին վերջին, լեռներում պայթեցրած տոննելի մոտ կալանվածներին։ Զահերի հրդեհով լուսավորվեց բակի ջրհորը. լուռ և շտապ կանգնեցրին նրանց քարե պատի մոտ, նրանք՝ գունատ և աչերը ինչպես սառած մոմեր։ Նըրափողցի դատարկությունից այն կողմ ծավալվում եր աղմուկն ու ճիչը, վոր ավետում եր լուսաբացը, կտրուկ, սոսկալի դղրդաց ապրանքատար մեքենան դարպանների մշուշում։ Անլուր, խուլակնթարթի ճիչով սողաց մահը...

Իսկ գիշերը յեկան գնդերը։ Մասսաները յետ քաշվեցին
շարքերի յերկաթ ճնշումից։ Աջ ֆլանգում առջևից ընթա-
նում եր բարձրահասակ, հողմահար կարմիր դեմքով, նոր
անդլիական շինել հագած, կարմիր, արյան պես կարմիր
վոտքերով, աչերը անթարթ եյին և հիացումով նայում եյին
դեպի առաջ՝ ամբոխների ճիշին, փողերի յերգին, կուլտու-
րաների լույսին։ Բերաններից զորեղ շնչով գոչում եր՝

Не надо нам монархии,

Не надо нам царя!

Бей буржуазию!

Товарищи, ура!*

Դաշտերից սլացող ավտոն, վոր դանդաղեցրել եր ըն-
թացքը, գնդերին հանդիպելով, կանդնաց ճամբարերանում։
Անծայրածիր յերթի, տարածությունների լույսի մեջ—
անշարժ սուր շիշակի մեջ եր քարե, դաժանության մասին
մտածողի պրոֆիլը։ Կիսաբաց բերանը ուզում եր ճշալ կոչով
և իշխանաբար,

Բանակը, բանակի հրամանատարը մտնում եյին Դայիր։

* Պետք չե մեզ մոնարխիա,
պետք չե թագավոր,
խիմիր բուրժուազիային,
ընկերներ, ուռա!



11.963

12 чпм.

22856

Цена 12 коп.

Х. 3.



АЛЕКСАНДР
МАЛЫШКИН

ПАДЕНИЕ ДАИРА

Отрывок из повести
(перев. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР,
Москва, центр, Никольская, 10